ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 37

«13» 05 2022 թ. ք. Երևան

ԼԱԼԱ ԱՐԹՈՒՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, երկրորդ դասի խորհրդական Լալա Արթուրի Առաքելյանը ՀՀ դատախազության համակարգում աշխատում է 2021 թվականի փետրվարի 11-ից:

Լալա Առաքելյանը դատախազության աշխատակիցների միջև պարտականությունների բաշխում կատարելու մասին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի 2021 թվականի թիվ 1 կարգադրության համաձայն՝ առանձին գործերով հսկողություն է իրականացնում Արաբկիրի վարչական շրջանում սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, այդ գործերով դատարաններում պաշտպանում է մեղադրանքը, ամփոփում է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների և մյուս իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ կատարված աշխատանքները, կատարում է վարչական շրջանների տարածքում պետական շահերի պաշտպանության աշխատանքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով քննարկում և լուծում է դատախազությունում ստացված դիմումները, կատարում քաղաքացիների ընդունելություն, դատախազի հանձնարարությամբ կատարում է ամփոփումներ և այլ աշխատանքներ:

ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ժամանակահատվածում Լալա Առաքելյանը հսկողություն է իրականացրել հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ավարտված 121 նյութերի նախապատրաստման օրինականության նկատմամբ: Հսկողություն է իրականացրել 296 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ, որից 20 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 42 քրեական գործով վարույթը կարճվել է, 35 քրեական գործ ուղարկվել է այլ մարմին, 68 քրեական գործով վարույթը կասեցվել է, 54 քրեական գործ

միացվել է, իսկ 77 քրեական գործով նախաքննությունը գտնվում է ընթացքի մեջ: Հսկողություն իրականացրած քրեական գործերով տրվել է 63 գրավոր ցուցում:

Լալա Առաքելյանի կողմից վերացվել է քրեական գործերով վարույթը կարճելու մասին՝ 3, կասեցնելու մասին՝ 11, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ 1, քրեական գործ հարուցելու մասին՝ 1 որոշում: Դատավարական ղեկավարում իրականացրած 12 քրեական գործով որոշում է կայացրել քննիչին վարույթից հեռացնելու մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ներկայացրել է 9 միջնորդագիր:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 44 քրեական գործով պաշտպանել է մեղադրանքը, որից 9 քրեական գործով կայացվել են մեղադրական դատավճիռներ, 6-ով՝ քրեական գործի վարույթը կարճվել է ոչ արդարացնող հիմքերով, իսկ 29-ը դատաքննության ընթացքի մեջ են: Մինչդատական վարույթի դատական ակտերով բերել է 4 վերաքննիչ բողոք, որոնցից 2-ը մերժվել են, 2-ն ընթացքի մեջ են: Ընթացք է տվել քաղաքացիների 142 դիմումի, միջնորդության և բողոքի, կատարել է 18 քաղաքացու ընդունելություն:

Կոռուպցիոն հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառված վնասները վերականգնելու ուղղությամբ Լալա Առաքելյանի կողմից դատախազական գործառույթներն իրականացնելու ընթացքում ձեռնարկված միջոցների արդյունքում վերականգնվել է 12.114.450 ՀՀ դրամ գումար:

Լալա Առաքելյանը տիրապետում է հանցագործությունների քննության, քննչական գործողությունների կատարման, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության մեթոդիկային և տակտիկային: Տիրապետում է բնագավառը կարգավորող օրենսդրությանը: Օժտված է կազմակերպչական և ղեկավարման անհրաժեշտ ընդունակություններով, պարբերաբար ուսումնասիրում է օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը, պարտաճանաչ է և կարգապահ, վայելում է աշխատանքային կոլեկտիվի հարգանքը:

Լալա Առաքելյանը խրախուսանքներ և կարգապահական տույժեր չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Լալա Առաքելյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Անցկացնել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Լալա Առաքելյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ